ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

# ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

29.10.2016թ. ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Ա. Սարիբեկյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյանը, Հ. Ղահրամանյանը, Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, Ս. Սաֆարյանը, Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

## Օրակարգ

1.Քննարկել և հաստատել ֆակուլտետի 2016-17 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:
/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/
2.Քննարկել և հաստատել ըստ ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերի ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարերը:
/Զեկ Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

***1. Լսեցին - Հ. Մարզպանյան***

Հ. Մարզպանյանը նշեց, որ համաձայն տնօրինության կողմից ներկայացված ժամանակացույցի 2016 -2017 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել մինչև ս/թ մայիսի 20-ը:

Որոշակի ճշգրտումներից հետո ամբիոնում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Նա նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի անհատական ծանրաբեռնվածությանը համապատասխան՝ ամբիոնի կողմից ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվում ավարտական աշխատանքների՝ ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները /նախագիծը կցվում է/:

***Լսեցին - Գ. Հովհաննիսյանին***

Նա նշեց, որ ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել դեռևս մայիսին: Սեպտեմբերին կայացած «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի նիստում քննարկվել և ճշգրտվել են ավարտական աշխատանքի թեմաները հաշվի առնելով նաև ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի նիստում հաստատվել է ավարտական աշխատանքների ցանկը ըստ ղեկավարների և ուսանողների ու ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը/նախագիծը կցվում է/:

***Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ավետիսյանը***

***Որոշեցին - հաստատել ֆակուլտետի երկու մասնագիտությունների 2015-16 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:***

***2. Լսեցին - Հ. Մարգպանյանին***

Հ. Մարգպանյանը նշեց, որ ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարում ընդգրկված են «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ պետական չափորոշիչներին համապատասխան մասնագետներ պատրաստելու համար անհրաժեշտ դասընթացների առանցքային հարցերը: Ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարը ամբողջությամբ համապատասխանում է կրթական ծրագրի պահանջներին և ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը/նախագիծը կցվում է/ :

***Լսեցին - Գ. Հովհաննիսյանին***

Գ. Հովհանիիսյանը, նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնում քննրակվել և հաստատվել է ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարը, որը համապատասխանում է «Սերվիս» մասնագիտության կրթական չափորոշիչներին: Ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարը ամբողջությամբ համապատասխանում է կրթական

ծրագրերի պահանջներին և ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը /նախագիծը կցվում է/

*Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Վ. Առաքելյանը*

Նրանք նշեցին, որ ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարի նախագծերը նախապես ներկայացվել է ամբիոնի դասախոսներին, որոնց դիտողությունները և նկատառումները ամբողջովին հաշվի են առնվել և քննարկվել են համապատասխան ամբիոնների նիստերում:

***Որոշեցին - հաստատել ֆակուլտետի երկու մասնագիտությունների 2016-17 ուս. տարում նախատեսված ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարերը***

***3.Լսեցին -ընթացիկ հարցեր***

***3.1. Լսեցին - Ֆակուլտետի երկու մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ :***

***/Զեկ. Գ. Ավետիսյան/***
***/Զեկ. Պ. Ասիլբեկյան/***
***Լսեցին - «Տնտեսագիտության տեսության» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար Գ. Ավետիսյանին***

Նա նշեց, որ ԵՊՀ-ի ԻՄ-ում ԿԾ-ի պատասխանատուի ինստիտուտը նոր է ներդրվել և հստակեցման փուլում է գտնվում պատասխանատուի գործառույթները: Սակայն համաձայն ներկայացված աշխատանքային պլանի համապատասխան ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

Հանդիպումներ եմ ունեցել բոլոր կուրսերի հետ, բայց առավել ուշադրության կենտրոնում են եղել առաջին կուրսի ուսանողները,

Առաջին կուրսի ուսանողներին ներկայացրել եմ ներքին կարգապահական կանոնները, մասնաճյուղի կառուցվածքը, մասնաճյուղում գործող կրթական գործընթացին վերաբերող կանոնակարգերը. դասատախտակից օգտվելու կարգը, օգնել եմ լրացնել պայմանագրերը, տրամադրել եմ առաջին կուրսի ուսանողի ուղեցույցը:

Կառուցողական քննարկումներ ենք ունեցել դասախոսների և ուսանողների/ չորրորդ կուրս/ հետ Կրթական ծրագրի վերջնարդյունքների վերաբերյալ և թե դասախոսները, թե ուսանողները հանդես են եկել առաջարկություններով: /ՌԾ1.1.3/ Արդյունքները գտնվում են վերլուծության փուլում:

Իրականացրել ենք քննարկումներ I-IV կուրսերում գնահատման համակարգի վերաբերյալ:

Հաջորդ գործընթացը, որին պետք է անդրադառնանք դասընթացի փաթեթների և ԿԾ վերջնարդյունքների համադրումն է:

***Լսեցին - «Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար Պ. Ասիլբեկյանին***

Պ. Ասիլբեկյանը նշեց, որ լուրջ ուշադրություն է դարձվել ուսանողներին առաջին ընթացիկ քննությունների նախապատրաստելու ուղղությամբ: Այս առումով հատկապես կարևորել եմ առաջին կուրսի հետ տարվող աշխատանքներին: Նրանց բացատրվել է կրեդիտային համակարգով ուսումնառության կարգը, ինչպես նաև իրենց իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում նաև քննությունների բողոքարկման և լրացուցիչ պարապմունքների խորհրդատվության կարգերը: Ժամանակին ուսանողների են տրամադրվել ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների բոլոր հարցաշարերը:

Հնարավորինս մասնակցել եմ ընթացիկ քննությունների գործընթացին, գրանցել եմ ուսանողների և դասախոսների առաջարկները ընթացիկ քննությունների կազմակերպման և գնահատման համակարգի բարելավման վերաբերյալ:

Չորրորդ կուրսի ուսանողների հետ քննարկվել է կրթական ծրագրի վերջնարդյունքները: Ուսանողների կողմից կատարված առաջարկությունները կքննարկվեն համապատասխան ամբիոնի նիստում: Նախատեսված է նմանատիպ քննարկումներ կազմակերպել նաև մյուս երեք կուրսերում:

Հաջորդ գործընթացը, որին պետք է անդրադառնանք դասընթացի փաթեթների և ԿԾ վերջնարդյունքների համադրումն է:

***Արտահայտվեցին - Գ. Միրոյանը, Ա. Պոտոսյանը***

Արտահայտվողները նշեցին, որ ԵՊՀ-ի ԻՄ-ում ԿԾ-ի պատասխանատուի ինստիտուտը նոր է ներդրվել և հստակեցման փուլում է գտնվում պատասխանատուի գործառույթները, այդ իսկ պատճառով ֆակուլտետի երկու մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարների կատարած աշխատանքը կարելի է գնահատել բավարար:

***Որոշեցին - Ֆակուլտետի երկու մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարների կատարած աշխատանքը կարելի է գնահատել բավարար::***